ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 մայիսի 2013 թվականի N 32-Ա

ք. Հրազդան

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Բջնիի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Ռուզաննա Հովհաննիսյանին*** տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2013 թվականի հունիսի 17-ից մինչև հուլիսի 15-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 628-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցը:

2. ***Ռուզաննա Հովհաննիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Բջնիի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության համակարգչային օպերատոր ***Աննման Սահակյանի***, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ ընկերության ընտանեկան բժիշկ ***Միրանույշ Զարգարյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ